



ՊԱՇՏՈՆ՝	Հաճախորդների սպասարկման բաժնի մասնագետ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ՝	Լրիվ դրույք
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ՝	Գավառ, ՀՀ
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ՝	Հնարավորինս շուտ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿՋԲՆԱԺԱՄԿԵՏ՝	Դեկտեմբերի 25, 2017թ.
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ՝	Հունվարի 10, 2018թ.
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ՝	Անժամկետ՝ 3 ամիս փորձաշրջանով

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Անելիք Բանկը փնտրում է հմուտ և բանիմաց Հաճախորդների սպասարկման բաժնի մասնագետի՝ Բանկի «Պայազատ» մասնաճյուղում հաճախորդների սպասարկում իրականացնելու նպատակով:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հաճախորդների հաշիվների բացում, վարում և փակում
- Ավանդային հաշիվների բացում, սպասարկում և փակում
- Արտարժույթի կանխիկ և անկանխիկ առքուվաճառքի իրականացում
- Վճարային համակարգերով գործառնությունների իրականացում
- Հաճախորդների կողմից ներկայացված վճարային փաստաթղթերի ընդունում, ստուգում և «Գործառնական օր» ծրագրում մուտքագրում
- Կումունալ վճարումների ընդունում և կատարում.

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն տնտեսագիտական/ֆինանսական կրթություն
- 1-2 տարվա աշխատանքային փորձը բանկային համակարգում
- Կանխիկ դրամի հետ աշխատելու փորձ
- ՀՀ բանկային օրենսդրության իմացություն
- Համակարգչային գիտելիքների լավ իմացություն (MS Office)
- Հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուների գերազանց իմացություն
- Հաղորդակցման և բանակցություններ վարելու հմտություն
- Թիմային աշխատանքի պատրաստակամություն
- Տարբեր իրավիճակներում աշխատելու և արագ կողմնորոշվելու ունակություն

ԴԻՄԵՆՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե ձեր գիտելիքները, մասնագիտական փորձն և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և դուք հետաքրքրված եք միանալու Անելիք Բանկի թիմին, խնդրում ենք լրացնել հայտարարությանը կից ներկայացված դիմում-հայտը և այն ուղարկել hr@anelik.am էլ.փոստի հասցեին՝ մինչև հայտարարության վերջնաժամկետը՝ վերնագիր (subject) տողում պարտադիր նշելով հաստիքի անվանումը: Հարցազրույցի կիրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Անելիք Բանկ» ՓԲԸ հիմնադրվել է 1990թ. թեթև արդյունաբերության բնագավառի ձեռնարկությունների կողմից՝ որպես փայատիրական կոմերցիոն բանկ: 1996թ. «Անելիք» փայատիրական առևտրային բանկը գրանցվել է (ՀՀ ԿԲ արտոնագիր No 9) և սկսել է գործել որպես «Անելիք Բանկ» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն: «Անելիք Բանկ» ՓԲԸ ունիվերսալ առևտրային բանկ է, որն ակտիվ մասնակցություն ու ներդրում ունի երկրի սոցիալ – տնտեսական մակարդակի բարելավման բնագավառում: 2007թ. «Անելիք Բանկ» ՍՊԸ վերակազմավորվել է փակ բաժնետիրական ընկերության: